ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական տնօրինությամբ հոկտեմբերի 1-ից ՀՀ Զինված ուժերի հոգևոր առաջնորդ է նշանակվել Տ. Վրթանես վարդապետ Աբրահամյանը:

Տ. ՎՐԹԱՆԵՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Ծնվել է 1962 թ. մարտի 21-ին Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Ծովատեղ գյուղում:

1969-1979 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:

1980 թ. ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան:

1981-1983 թթ. ծառայել է խորհրդային բանակում: Զորացրվելուց հետո շարունակել է ուսումը Հոգևոր Ճեմարանում:

1987 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. տեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի, ձեռնադրվել է սարկավագ:

Ճեմարանում ուսումնառությունն ավարտելուց հետո աշխատանքի է նշանակվել Մայր Տաճարի թանգարանում:

1988 թ. մարտի 10-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Աղվանից Եկեղեցու համառոտ պատմություն (Դ-ԺԷ դարեր)» թեմայով, և արժանացել «քաջալավ» գնահատականի:

1988 թ. մայիսի 22-ին՝ Հոգեգալստյան տոնին, ձեռամբ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

1989-1994 թթ. եղել է Ամարասի վանքի վանահայրը:

1992 թ. նոյեմբերին պաշտպանել է վարդապետական թեզ՝ «Հովսեփ Արցախեցի՝ վահան ուղղափառության» թեմայով:

1994-1996 թթ. եղել է Արցախի թեմի առաջնորդական փոխանորդ:

1996 թ. հունիսին նշանակվել է Ս. Հռիփսիմե վանքի վանահայր:

1997-1999 թթ. ծառայել է որպես ՀՀ Պաշտպանության նախարարի հոգևոր խորհրդատու:

1999-2001 թթ. եղել է Ս. Հռիփսիմե վանքի վանահայրը:

2001 թ. օգոստոսից հոգևոր հովվության է նշանակվել Գուգարաց թեմի Տավուշի մարզում:

2006 թ. սեպտեմբերի 28-ից հոգևոր հովվության է նշանակվել Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ